

Հաստատում եմ՝

ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ

N 166 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Տնօրեն՝ ----- Մ. Պ. Քուշկյան

<----->> 2023թ.

ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 166 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ  
դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

դասարան՝ VII Գ

դասղեկ՝ Առաքելյան Ա.

2023-2024 ուստարի

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)

Արտեմ Միկոյանի անվան հ. 166 հիմնական դպրոցի 7<sup>4</sup> դասարանը համալրված է երեսունմեկ աշակերտով՝ 18 աղջիկ, 13 տղա: Նախորդ տարին գերազանց են սովորել 11 աշակերտ և հարվածային 5 աշակերտ: Աշակերտները տիրապետում են նախնական գիտելիքների, կազմակերպված են, աշխույժ: Դասարանում ձևավորված է առողջ դասարանական կոլեկտիվ, որտեղ հարգվում են բոլորի իրավունքները: Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ ակնհայտ է դառնում, որ մի շարք դժվարություններ են ի հայտ գալիս, որոնց լուծման համար անհրաժեշտ է լինել համբերատար, զգոն և հետևողական: Դասարանում տիրում է միմյանց զիջելու և փոխըմբռնելու ունակություն: Ուստարվա սկզբին կրթադաստարակչական աշխատանքները սկսվեցին աշակերտների մոտ տարիքային փոփոխությունների ուսումնասիրմամբ: Այդ նպատակով անցկացվելու են ծնողական ժողովներ, զրույցներ աշակերտների հետ՝ նպատակ ունենալով սերմանել սեր և հարգանք միմյանց նկատմամբ, ինչպես նաև հետևել դպրոցի ներքին կարգապահական կանոններին:

Իմ նպատակն է աշխատել դասարանի բարձր առաջադիմության ուղղությամբ, ձևավորել կարգապահ, մաքրասեր, կազմակերպված, հանդուրժող, համերաշխ կոլեկտիվ, նպաստել աշակերտների ընդհանուր մտահորիզոնի ընդարձակմանը, քաղաքացիականության և ուսման կարևորության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման ձևավորմանը:

Բոլոր աշակերտներն էլ յուրահատուկ են և ունեն իրենց առանձնահատկությունները:

Լիահույս եմ, որ այս կոլեկտիվը կդառնա համագործակցող, աշխատասեր, փոխօգնության պատրաստ ամուր ընտանիք:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

1. Դասարանի ավագի ընտրություն:
  2. Դասարանում ավագի օգնականների ընտրություն:
  3. Դասարանում կազմակերպված աշխատանքի համակարգում (հերթապահության սահմանում):
  4. Աշակերտների մոտ ուսման նկատմամբ հետաքրքրության մեծացում:
  5. Ազգային սովորությունների արժևորում:
  6. Մաքրության և անձնական հիգիենայի կանոնների պահպանում:
-

7. Բնական աղետներից պաշտպանվելու գիտելիքների տրամադրում:
8. Ներքին կարգապահական կանոնների սահմանում:
9. Առանձնահատուկ և հետևողական վերաբերմունք աշակերտական հագուստին:
10. Ծնող, ուսուցիչ և աշակերտ փոխհարաբերությունների ձևավորում:
11. Աշակերտների ստեղծագործական հմտությունների և կարողությունների զարգացում:
12. Այցելություն պատմամշակութային և ուսումնադաստիարակչական ուսումնական հաստատություններ:

---

---

---

### 3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

#### 3.1 Հոգևոր դաստիարակություն

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել էքսկուրսիաներ դեպի պատմական եկեղեցական վայրեր:

#### 3.2 Գեղագիտական դաստիարակություն

Երեխաների մեջ սերմանել գեղագիտական ճաշակ: Զարգացնել գեղեցիկը տեսնելու, զգալու, ինչպես նաև ստեղծելու կարողություններ: Դասարանում ստեղծել մշակութային անկյուն և աշակերտներին ներգրավել այդ անկյունի ստեղծման աշխատանքներին:

#### 3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Ձևավորել հայրենիքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք՝ հիմնված անվերապահ սիրո և հարգանքի վրա, ակնաձանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ, ձգտում՝ կատարելու հայրենանվեր քայլեր:

#### 3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների բացասական ազդեցությունների գիտակցում և օրինակելի վարքագծի դրսևորում, ֆիզիկական կոփմանն ուղղված միջոցառումների նախաձեռնում:

### 3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում: Աշակերտների ներգրավում համապատասխան շաբաթօրյակներին, ծառատունկերին: Դասարանի բոլոր աշակերտներին ներգրավել դասարանի մաքրության աշխատանքներին:

### 3.6 Բնապահպանական դաստիարակություն

Բնության արժևորում և հոգատար վերաբերմունքի ձևավորում: Դասղեկի ժամերին անդրադարձ կատարել բնապահպանական նորմերին: Տարվա ընթացքում կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը:

### 3.7 Դպրոց-ընտանիք կապը

Երեխային ճանաչելու և նրա կարիքները համատեղ բացահայտելու գործընթացի իրականացում: Երեխաների անվտանգության ապահովման և իրավունքների պաշտպանության ոլորտում սերտ համագործակցության ապահովում, ուսուցիչների, երեխաների և ծնողներ իմասնակցությամբ դասարանական և դպրոցական կանոնների մշակում: Աշակերտի ուսումնաճանաչողական ձեռքբերումների համատեղ քննարկում, խոչընդոտների բացահայտում և նրա հետ անհատական զարգացման աջակցման ծրագրի մշակում: Դպրոցից զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման գործում ծնողական համայնքի մասնակցության ապահովում: Դաստիարակչական միասնական միջավայրի ստեղծում և ընտանեկան ու դպրոցական դաստիարակության ինտեգրում: Կրթության հաջորդ աստիճանների շարունակականության ապահովում, համատեղ գործունեության իրականացում:

**ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1-ին շաբաթ	Աշակերտների հաշվառում, դասագրքերի բաշխում: Դասասենյակի մաքրում և կահավորում:	4.09-8.09	Դասղեկ Աշակերտներ
2-րդ շաբաթ	Ընտրել դասարանի ավագ, օգնականներ: Կազմել հերթապահության ցուցակ, ընտրել դասղեկի ժամ:	11.09-15.09	Դասղեկ աշակերտներ
3-րդ շաբաթ	Գնահատման նոր համակարգի հետ ծանոթացում: Անցկացնել դասագրքերի, տետրերի, մնացած գրենական պիտույքների առկայության ստուգում: Հետևել աշակերտների հաճախումներին, ուշացումներին, կատարել դասալսումներ	18.09-22.09	Դասղեկ Աշակերտներ Դասավանդող ուսուցիչներ
4-րդ շաբաթ	Աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողականություն և միմյանց հարգելու կարողություն:	25.09-29.09	Դասղեկ Աշակերտներ ծնողներ
5-րդ շաբաթ	Ուսման առաջադիմության վերահսկում, դասավանդող ուսուցիչների հետ խորհրդատվություն:	02.10-06.10	Դասղեկ Աշակերտներ Դասավանդող ուսուցիչներ
6-րդ շաբաթ	Նպաստել բազմակարծության ու աշխարհայացքի ձևավորմանը:	09.10-13.10	Դասղեկ Աշակերտներ ծնողներ
7-րդ շաբաթ	Նպաստել անհատի ձևավորմանը, յուրաքանչյուրի կարողությունը բացահայտող միջավայրի ստեղծմանը: Ծնող-ուսուցիչ հանդիպման կազմակերպում:	16.10-20.10	Դասղեկ, դասավանդող ուսուցիչ, ծնող
8-րդ շաբաթ	Ուսումնադաստիարակչական	30.10-03.11	Դասղեկ

	աշխատանքների առաջին երկու ամիսների արդյունքների քննարկում:		Աշակերտներ
9-րդ շաբաթ	Դասալսումների իրականացում, կարգապահական կանոնների վերահսկում:	06.11-10.11	Դասղեկ
10-րդ շաբաթ	Ուշադրություն դարձնել աշակերտների իրավունքներին և պարտականություններին:	13.11-17.11	Դասղեկ
11-րդ շաբաթ	Պարզել աշակերտների նախասիրություններն ու հետաքրքրությունները, ուշադրություն դարձնել ստեղծագործական գործունեությանը:	20.11-24.11	Դասղեկ Աշակերտներ
12-րդ շաբաթ	Աշակերտներին հանձնարարել հավաքել ստեղծելություններ Հայաստանի Հանրապետության ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին:	27.11-01.12	Դասղեկ Աշակերտ
13-րդ շաբաթ	Կիսամյակի ավարտից առաջ գնահատականների վերահսկում, բացակայությունների հաշվարկում:	04.12-08.12	Դասղեկ
14-րդ շաբաթ	Դասասենյակի ամանորյա ձևավորում:	11.12-15.12	Դասղեկ, աշակերտներ
15-րդ շաբաթ	Ծնողական ժողովի նախապատրաստում և անցկացում:	18.12-22.12	Դասղեկ
16-րդ շաբաթ	Ուսուցիչ, աշակերտ հարաբերությունների ուսումնասիրում: Կարգապահական հարցերի վերահսկում՝ հաճախումներ, ուշացումներ, հազուստ:	08.01-12.01-2024թ.	Դասղեկ, աշակերտներ
17-րդ շաբաթ	Ուշադրություն դարձնել սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորմանը, կատարել դասալսումներ:	15.01-19.01	Դասղեկ Աշակերտ
18-րդ շաբաթ	Աշխատանք տանել աղջիկների հետ. հիգիենայի կանոնների վերաբերյալ:	22.01-26.01	Դասղեկ, աշակերտներ, հոգեբան
19-րդ շաբաթ	Աշխատանք տանել տղաների	29.01-02.02	Դասղեկ,

	հետ.հիգիենայի հետ կապված:		աշակերտներ, հոգեբան
20-րդ շաբաթ	Բացակայությունների և ուշացումների վերահսկում	05.02-09.02	Դասղեկ
21-րդ շաբաթ	Դասալսումների իրականացում և գնահատականների ուսումնասիրություն	12.02-16.02	Դասղեկ
22-րդ շաբաթ	Դասարանում առաջացած խնդիրների վերհանում և լուծումների առաջադրում	19.02-23.02	Դասղեկ Աշակերտներ
23-րդ շաբաթ	Աշխատանք ծնող խորհրդի հետ	26.02-01.03	Դասղեկ
24-րդ շաբաթ	Աշակերտների միջանձնային հարաբերությունների պարզում	04.03-08.03	Դասղեկ Աշակերտներ
25-րդ շաբաթ	Ծնող-ուսուցիչ-երեխա կապի ստեղծում	11.03-15.03	Դասղեկ, երեխա, ծնող, դասավանդող ուսուցիչ
26-րդ շաբաթ	Հետևել ներքին կարգապահական կանոնների պահպանմանը	18.03-22.03	Դասղեկ Աշակերտներ
27-րդ շաբաթ	Աշխատանք չառաջադիմող աշակերտների հետ	01.04-05.04	Դասղեկ, դասավանդող ուսուցիչ, աշակերտ
28-րդ շաբաթ	Էթիկայի կանոնների պահպանում, գրույց-քննարկումներ	08.04-12.04	Դասղեկ Աշակերտներ
29-րդ շաբաթ	Զրույց՝ „Ընտանիքի դերը աշակերտի կյանքում, թեմայով	15.04-19.04	Դասղեկ Աշակերտներ
30-րդ շաբաթ	Զուգահեռ դասարարանների աշակերտների հետ հարաբերությունների քննարկում, վերլուծություն	22.04-26.04	Դասղեկ Աշակերտներ
31-րդ շաբաթ	Դասագրքերի ուսումնասիրություն և խնամք	29.04-03.05	Դասղեկ
32-րդ շաբաթ	Այցելություն որևէ մշակութային վայր	06.05-10.05	Դասղեկ Աշակերտներ
33-րդ շաբաթ	Կիսամյակային գնահատականների	13.05-17.05	Դասղեկ






**ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ,  
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ**

համար	նախապիրական- առարկայական խմբակ	գեղարվեստական- երաժշտական խմբակներ	մարզական խմբակներ	այլ խմբակներ
1		Կիթառ		
2				
3	Մաթեմատիկա, անգլերեն			
4		Պարի խմբակ		
5	Ծրագրավորման խմբակ		Լող	
6			Ըմբշամարտ	
7				
8				
9	Նկարչության խմբակ, անգլերեն, ռուսաց լեզու, մաթեմատիկա		Լող	
10	Անգլերեն, ռուսաց լեզու, մաթեմատիկա			
11				Ավիամոդել ավորում
12				
13				Մենթալ թվաբանությ յուն
14				
15	Անգլերեն		Լող	
16				
17		Կիթառ		
18				

19	Անգլերեն			
20	Նկարչություն			
21				
22	Կավագործություն, նկարչություն, անգլերեն			
23	Անգլերեն, մաթեմատիկա			
24		Պարի խմբակ		
25				
26	Հելյունագործություն			
27				
28				
29				Շախմատի ակադեմիա
30				
31				

**ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ**

անցկացման օրը	Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
01.09.23թ.	<<Սեպտեմբերի 1՝ Գիտելիքի ու դպրության օր >>: <<Նախորդ ուս. տարվա արդյունքների վերլուծություն>>: <<Նոր ուս. տարվա անելիքների ծրագրում>>:	
06.09.23թ.	Աշակերտական խորհրդի ընտրություն: 2023-2024 ուս. տարվա դպրոցի ներքին կարգապահական կանոնների ընթերցում և քննարկում:	
13.09.23թ.	Ավագը և նրա տրակական հատկանիշները:	
20.09.23թ.	Մուտքի բրնինքնապաշտպանական միջոց:	
27.09.23թ.	Խոնարհման դասեր՝ նվիրված 44օրյա պատերազմին:	

04.10.23թ.	<<Ուսուցիչ: Ո՞վ է նա >>: <<Ուսուցիչ, որին ես շնորհակալ եմ, այն բանի համար, որ նա ... >>:	
11.10.23թ.	Ինքնաբացահայտում՝ <<Իմանունը>>, <<Իմ հույզերը>>	
18.10.23թ.	<b>Գրքերի աշխարհում</b> Թարգմանչաց տոն <<Գրից մինչև գիրք և տպագրություն>>	
01.11.23թ.	Մաքուր պահենք մեր շրջապատը: Վատ սովորություններ: Ի՞նչպես պայքարել դրանց դեմ:	
08.11.23թ.	<b>Մեղիագրագիտության</b> <b>շաբաթ</b> <b>Հայստանում</b>	
15.11.23թ.	<i>Վնասակար սովորություններ</i>	
22.11.23թ.	Կազմակերպել աշակերտական փոխօգնություն ուսման գործում	
29.11.23թ.	Հաշմանդամների միջազգային օր	
06.12.23թ.	Բնական աղետները և դրանց տեսակները Ներկայացնել բնական աղետների պատճառները և հետևանքները <b>Ինչպես պաշտպանվել բնական աղետներից</b> Սպիտակի երկրաշարժ	
13.12.23թ.	<b>Պատիվ ունեմ լինելու Ա. Միկոյանի հետևորդը</b>	
20.12.23թ.	Ուրախ դիմավորենք ամանորը: Ամանորյա միջոցառումների նախապատրաստում:	
10.01.24թ.	I կիսամյակում սեփական անելիքների գնահատում: II կսամյակի աշխատանքների պլանավորում:	
17.01.24թ.	Կլոր սեղան: Ի՞նչ է առողջությունը: Խուսափենք անառողջ սովորություններից: Ի՞նչ գիտենք դեղերի մասին:	
24.01.24թ.	<b>Հայրենիքի պաշտպանները երեկ, այսօր և վաղը</b>	
31.01.24թ.	Ժամանակի կառավարում:	
07.02.24թ.	<b>Առողջ ապրելակերպի սկզբունքները</b>	
14.02.24թ.	Պատանեկան վտանգավոր խմբավորումներ և նրանց ազդեցությունը շրջապատի վրա:	
21.02.24թ.	Գիրքն իմ կյանքում:	
28.02.24թ.	Կանանց միջազգային տոն:	

















